ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

Ընդհանուր բաժին
№ 1754
10 ... 2021
Կից ... Նշում ...

«17» մայիս 2021թ. No 1815 - Ա

# ՈՒԿՐԱԻՆԱՅԻ «ԳԱԸ“ԷԿՈՖԱՐՄ” ՍՊԸ, 116, ՇԵՎՉԵՆԿՈ Փ., ՈՒԼԱՇԱՆԻՎԿԱ ԳՅՈՒՂ, ՇԵՊԵՏՈՎՍԿԻ ՇՐՋԱՆ, ԿՄԵԼՆԻՏՍԿԻ ՄԱՐԶ, 30070» ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ (ԴԵՂԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ԻՐԱՎԱՏԵՐ՝ «ԳԱԸ “ԷԿՈՖԱՐՄ” ՍՊԸ, Շ. 19 , ՕԲՈԼՈՆՍԿԱ ՆԱԲԵՐԵԺՆԱ Փ., ԿԻԵՎ, 04210, ՈՒԿՐԱԻՆԱ») «ՊՐՈՏԵՖԼԱԶԻԴ (ՊՐՈՏԵՖԼԱԶԻԴ) ՄՈՄԻԿՆԵՐ ՀԵՇՏՈՑԱՅԻՆ 1,8ՄԳ; (10/2X5/)» ԴԵՂԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ մասի 2-րդ կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 51-րդ կետը, «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի փորձաքննության 29.04.2021 թվականի N 0103043421 բացասական եզրակացությունը՝ Ուկրաինայի «ԳԱԸ “ԷԿՈՖԱՐՄ” ՍՊԸ, 116, Շևչենկո փ., Ուլաշանիվկա գյուղ, Շեպետովսկի շրջան, Կմելնիտսկի մարզ, 30070» դեղագործական ընկերության արտադրության (դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝ «ԳԱԸ “ԷԿՈՖԱՐՄ” ՍՊԸ, շ. 19, Օբոլոնսկա Նաբերեժնա փ., Կիև, 04210, Ուկրաինա»), «Պրոտեֆլազիդ (պրոտեֆլազիդ) մոմիկներ հեշտոցային 1,8մգ; (10/2x5/)» դեղի անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման վերաբերյալ թիվ 19856 առ 29.04.2021թ. փորձագիտական բացասական եզրակացությունը, առ այն, որ չի համապատասխանում Պրոտեֆլազիդի նկարագրություն կետով, հիմք լաբորատոր փերձաքննության եզրակացություն R-2021-57; 22.04.2021թ.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

Лиев. 17.05.21 ժ. 16⁴⁰ ...

1.Մերժել Ուկրաինայի «ԳԱԸ "ԷԿՈՖԱՐՄ" ՍՊԸ, 116, Շևչենկո փ., Ուլաշանիվկա գյուղ, Շեպետովսկի շրջան, Կմելնիտսկի մարզ, 30070» դեղագործական ընկերության արտադրության (դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝ «ԳԱԸ "ԷԿՈՖԱՐՄ" ՍՊԸ, 2. 19, Օբոլոնսկա Նաբերեժնա փ., Կիև, 04210, Ուկրաինա»), «Պրոտեֆլազիդ (պրոտեֆլազիդ) մոմիկներ հեշտոցային 1,8մգ; (10/2x5/)» դեղի գրանցումը Հայաստանի Հանրապետությունում:

2. ՀՀ առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ջ. Դարբինյանին՝

1) սույն հրամանը 2-օրյա աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ձևով էլեկտրոնային փոստի միջոցով՝ առաքել հայտատուին:

3. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում վարչական վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից:

4. Սույն հրամանը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով սահմանված կարգով և ժամկետներում՝ վարչական կարգով կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում՝ դատական կարգով:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

17.05.2021

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157